



ԻՐԱՎԱԿԱՆ ԽՆԴԻՐ 3

ՔՐԵԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԳՐԱՎՈՐ ՔՆՆՈՒԹՅԱՆ

ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

2017 թվականի սեպտեմբերի 4-ին նախաքննության մարմնի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 13103617 քրեական գործը այն փաստի առթիվ, որ անհայտ անձը 2017 թվականի սեպտեմբերի 4-ին ժամը 09.00-ի սահմաններում, Երևան քաղաքի Հ.Քոչար փողոցի հատվածում, քաշել-պոկելու եղանակով բացահայտ հափշտակել է Արմինե Պետրոսյանի ձեռքի պայուսակը, որի մեջ եղել է 900.000 ՀՀ դրամ գումար:

2017 թվականի սեպտեմբերի 5-ին քննիչ Լ.Գրիգորյանը Ա.Պետրոսյանին ճանաչել է որպես տուժող, ով ցուցմունք է տվել այն մասին, որ 2017 թվականի սեպտեմբերի 4-ին առավոտյան ժամը 08:30-ի սահմաններում դուրս է եկել տանից և ուղևորվել իր բարեկամուհի Հասմիկ Սիմոնյանի տուն: Երբ անցնելիս է եղել Հ.Քոչար փողոցով, իրեն անձանոթ բարձրահասակ մի երիտասարդ, որին տեսնելուն պես կճանաչի ընդհանուր կառուցվածքից, դեմքի դիմագծերից, գլխին առկա վնասվածքից, անսպասելի կերպով քաշել է իր պայուսակը, խլել իրենից և դիմել փախուստի: Այդ պահին ինքը օգնություն է կանչել և խնդրել զանգահարել ոստիկանություն: Իր մոտ առկա է եղել 900.000 ՀՀ դրամ, քանի որ դեպքից անմիջապես առաջ Հ.Քոչար փողոցի վրա գտնվող բանկոմատից էր հանել և պատրաստվում էր վերադարձնել Հ.Սիմոնյանի պարտքը:

2017 թվականի սեպտեմբերի 8-ին որպես վկա հարցաքննության ժամանակ Լևոն Սարգսյանը ցուցմունք է տվել այն մասին, որ դեպքի օրն աշխատանքի գնալիս գտնվել է Հ.Քոչար փողոցի վրա, երբ մի տարեց կին օգնություն է կանչել և հայտարարել, որ իրենից հափշտակել են իր պայուսակը: Երբ ձայնի ուղղությամբ շրջվել է, տեսել է, որ մի երիտասարդ ձեռքին ինչ-որ պայուսակ փախչում է հակառակ ուղղությամբ: Այդ երիտասարդին ինքը ճանաչել է, քանի որ վերջինս աշխատել է իրենց շենքի բակում գտնվող բանջարեղենի խանութում: Այնուհետև իր բջջային հեռախոսահամարից զանգահարել է 1-02 և հաղորդում տվել հանցագործության մասին:

2017 թվականի սեպտեմբերի 15-ին որպես վկա հարցաքննության ժամանակ Հ.Սիմոնյանը հայտնել է, որ դեպքի նախորդ օրը Ա.Պետրոսյանը զանգահարել է իրեն և հայտնել, որ առավոտյան վերադարձնելու է իրենից պարտք վերցված 2.000.000 ՀՀ դրամից 900.000 ՀՀ դրամը, սակայն հաջորդ ամբողջ օրը չի պատասխանել իր զանգերին և չի հանդիպել: Մի քանի օր անց միայն ինքը տեղեկացել է տեղի ունեցած կողոպուտի մասին:

Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է, որ վկա Լ.Սարգսյանի մատնանշած բանջարեղենի խանութում աշխատած երիտասարդը Արամ Կարապետյանն է եղել, որը 2017 թվականի սեպտեմբերի 4-ին հափշտակել է Ա.Պետրոսյանի պայուսակը և դիմել փախուստի:

Քննիչ Լ.Գրիգորյանը 2017 թվականի սեպտեմբերի 26-ին Ա.Կարապետյանին ներգրավում է որպես մեղադրյալ ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և հայտարարում հետախուզում, քանի որ ձեռնարկված միջոցառումների արդյունքում հնարավոր չի լինում վերջինիս բացահայտել: Դեռ ավելին՝ պարզ է դառնում, որ դեպքի հաջորդ օրը նա մեկնել է Ռուսաստանի Դաշնություն:



Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 2017 թվականի սեպտեմբերի 27-ի որոշմամբ բավարարվում է Ա.Կարապետյանի նկատմամբ որպես խափանման միջոց 2 ամիս ժամկետով կալանավորումը ընտրելու վերաբերյալ միջնորդությունը:

2017 թվականի սեպտեմբերի 29-ին քննիչ Լ.Գրիգորյանը կատարում է լուսանկարով անձին Ա.Պետրոսյանի ճանաչմանը ներկայացնելու քննչական գործողություն, որի ընթացքում վերջինս մեղադրյալ Ա.Կարապետյանին չի ճանաչում:

Տեղեկանալով իր նկատմամբ հայտարարված հետախուզման և որպես խափանման միջոց ընտրված կալանավորման մասին՝ Ա.Կարապետյանը լիազորում է փաստաբան Ն.Մարգարյանին ներկայացնելու իր շահերը և հանդես գալու որպես իր պաշտպան: Ն.Մարգարյանը միջնորդություն է ներկայացնում առաջին ատյանի դատարան՝ խնդրելով ընտրված խափանման միջոց կալանավորումը փոխարինել այլընտրանքային խափանման միջոց գրավով, քանի որ իր պաշտպանյալը քննությունից թաքնվելու նպատակ չի հետապնդել, Ռուսաստանի Դաշնություն մեկնել է բուժման նպատակով և վերադառնալու է, բացի այդ, որպես իր վերադարձի հավաստում՝ դեպոզիտ հաշվին արդեն իսկ փոխանցվել է 900.000 ՀՀ դրամը: Առաջին ատյանի դատարանը, 2017 թվականի հոկտեմբերի 11-ին քննության առնելով ներկայացված միջնորդությունը, բավարարում է այն և կալանավորումը փոխարինում է գրավով՝ գրավի չափ սահմանելով 2.000.000 ՀՀ դրամը:

2017 թվականի հոկտեմբերի 13-ին Ա.Կարապետյանը վերադառնում է Հայաստան և ներկայանում վարույթն իրականացնող մարմնին:

Նույն օրը իրեն առաջադրված մեղադրանքի շուրջ ցուցմունք է տվել այն մասին, որ ինքը որևէ առնչություն չունի, իրեն մեղավոր չի ճանաչում, ինչ վերաբերում է վկա Լ.Սարգսյանին, ապա նա իր հետ մինչ օրս էլ գտնվում է թշնամական հարաբերությունների մեջ և նման ցուցմունք տալով՝ փորձել է վրեժխնդիր լինել:

Ելնելով վերոգրյալից՝ պաշտպան Ն.Մարգարյանը միջնորդություն է ներկայացնում Լ.Սարգսյանին առերես հարցաքննելու վերաբերյալ:

Քննիչ Լ.Գրիգորյանը մերժում է վկա Լ.Սարգսյանի հետ առերես հարցաքննություն կատարելը, քանի որ վերջինս գտնվում է Վրաստանի Հանրապետությունում և հայտնի չէ, թե երբ կվերադառնա, իսկ ինքը չի կարող բավարարել մի միջնորդություն, որի կատարումը հնարավոր չէ ապահովել՝ նշելով նաև, որ այդ անհնարինությունն առաջացել է մեղադրյալ Ա.Կարապետյանի քննությունից թաքնվելու պատճառով:

Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ քննիչ Լ.Գրիգորյանը 2017 թվականի հոկտեմբերի 19-ին մեղադրյալ Ա.Կարապետյանին ներկայացնում է տուժող Ա.Պետրոսյանի ճանաչմանը, ով իրեն ներկայացված չորս անձանից ճանաչում է նրան՝ գլխին առկա սպիից, հասակից, ընդհանուր կառուցվածքից:

2017 թվականի նոյեմբերի 3-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվում է դատարան:

Մինչ դատաքննությունը սկսելը ամբաստանյալ Ա.Կարապետյանը, խորհրդակցելով իր պաշտպան Ն.Մարգարյանի հետ, ներկայացնում է քրեական գործով արագացված կարգ կիրառելու միջնորդություն, ընդունելով իրեն առաջադրված մեղադրանքը, միևնույն ժամանակ ներկայացված քաղաքացիական հայցի մասով հայտարարելով, որ այն անհիմն է, քանի որ քաղաքացիական հայցվորի պայուսակում եղել է ոչ թե 900.000, այլ 700.000 ՀՀ դրամ, ուստի այն ընդունում է այդքանով:

Տուժող Ա.Պետրոսյանը հայտարարում է, որ իր համար առաջնահերթ է, որպեսզի մեղավոր անձը ենթարկվի քրեական պատասխանատվության, իսկ իրեն պատճառված վնասը հատուցվի, ուստի արագացված կարգի կիրառման դեմ որևէ առարկություն չունի:



Առաջին ատյանի դատարանը բավարարում է ներկայացված միջնորդությունը՝ հաշվի առնելով այն հանգամանքները, որ մեղադրական եզրակացությունում դատախազը չի առարկել դատական քննության արագացված կարգի կիրառման դեմ, միևնույն ժամանակ դատական նիստի ժամանակ ամբաստանյալ Ա.Կարապետյանն ամբողջությամբ ընդունել է իրեն առաջադրված մեղադրանքը, իսկ քաղաքացիական հայցը մասնակիորեն ընդունելն արգելք չէ հետագայում քաղաքացիական հայցվորի կողմից քաղաքացիական դատավարության կարգով պահանջ ներկայացնելու համար, դեռ ավելին՝ դեպոզիտ հաշվում արդեն իսկ վճարվել է 900.000 ՀՀ դրամը:

Առաջին ատյանի դատարանը 2017 թվականի դեկտեմբերի 6-ին արագացված կարգի կիրառման արդյունքում Ա.Կարապետյանին մեղավոր է ճանաչում ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և նշանակում պատիժ՝ 3 տարի ժամկետով ազատազրկում, իսկ քաղաքացիական հայցը թողնում է առանց քննության:

2017 թվականի դեկտեմբերի 22-ին ամբաստանյալ Ա.Կարապետյանը ներկայացնում է վերաքննիչ բողոք՝ խնդրելով բեկանել կայացված դատավճիռը և իր նկատմամբ նշանակել ազատությունից զրկելու հետ չկապված պատիժ:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը հիշյալ վերաքննիչ բողոքը թողել է առանց քննության, քանի որ վերաքննիչ բողոքում բացակայել է այն ներկայացնող անձի ստորագրությունը:

ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐ

Հարցադրում 1.

Գնահատե՛ք անձին ճանաչման ներկայացնելու քննչական գործողության կատարման իրավաչափությունը: Հիմնավորե՛ք պատասխանը:

Հարցադրում 2.

Գնահատե՛ք քննիչ Լ.Գրիգորյանի կողմից պաշտպան Ն.Մարգարյանի միջնորդությունը մերժելու վերաբերյալ որոշման իրավաչափությունը: Հիմնավորե՛ք պատասխանը:

Հարցադրում 3.

Գնահատե՛ք Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 2017 թվականի հոկտեմբերի 11-ի որոշման իրավաչափությունը: Հիմնավորե՛ք պատասխանը:

Հարցադրում 4.

Գնահատե՛ք դատական քննության արագացված կարգ կիրառելու իրավաչափությունը: Հիմնավորե՛ք պատասխանը:

Հարցադրում 5.

Գնահատե՛ք ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին որոշման իրավաչափությունը: Հիմնավորե՛ք պատասխանը: